ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ (ՀՆՀ)

Ամսաթիվը՝ **22 փետրվարի, 2023թ.**

Պայմանագիր՝ **EFSD -W/3/2023**

EFSD դրամաշնորհ

Ծրագրի անունը՝

«Էներգաարդյունավետ տարածաշրջաններ. հասարակական շենքերում էներգախնայողության բարձրացման մեխանիզմների կիրառում և «Կանաչ էներգետիկայի» աջակցման ծրագիր

1. Հայաստանի Հանրապետությունը **Կայունացման և զարգացման Եվրասիական հիմնադրամից (EFSD)** ստացել է դրամաշնորհ **Էներգաարդյունավետ տարածաշրջաններ. հասարակական շենքերում էներգախնայողության բարձրացման մեխանիզմների կիրառում և «Կանաչ էներգետիկայի»** աջակցման ծրագիր ծախսերը հոգալու համար և նախատեսում է օգտագործել այդ միջոցների մի մասը հանրային օբյեկտներում էներգախնայողության ներդրումների անհրաժեշտ վճարումները կատարելու համար՝ **EFSD -W/3/2023 - Գյումրու քաղաքապետարանի «Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ում**:
2. **Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը** հրավիրում է ներկայացնել հայտեր հետևյալ **հանրային օբյեկտում էներգախնայողության միջոցառումների իրականացման** համար՝ **EFSD -W/3/2023 - Գյումրու քաղաքապետարանի «Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի**:
   Մրցութային փաթեթը հայերեն կարող եք ձեռք բերել **Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամից (R2E2 Հիմնադրամ)՝** ուղարկելով նամակ-խնդրանք հետևյալ էլ. հասցեին zaruhi.gharagyozyan@r2e2.am**:** Մրցութային փաթեթի թղթային տարբերկը կարող եք ստանալ՝ վճարելով **50,000 ՀՀԴ** R2E2 Հիմնադրամի ստորև նշված հաշվեհամարին և ներկայացնելով հաշիվ-ապրանքագիր (թղթային տարբերակը պետք է ներկայացնել R2E2 Հիմնադրամ, կամ բնօրինակի սկանավորված տարբերակը ներկայացնել էլ. հասցեին) **Հայաստանի վերականգվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ**: Մրցութային փաթեթի էլեկտրոնային տարբերակը կարող էք ստանալ անվճար, էլ. փոստի միջոցով: Հետաքրքրված հայտատուները կարող են ստանալ լրացուցիչ տեղեկատվություն նույն հասցեից:
3. **Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը** կկազմակերպի նախամրցութային ժողով **2023 թվականի մարտի 9-ին:** Ժողովի ընթացքում կհստակեցվեն Հայտերի պատրաստման հետ կապված բոլոր հարցերը: Նախամրցութային ժողովին չմասնակցելը հիմք չի հանդիսանալու հայտը մերժելու համար:

4. Հայտերը պետք է ուժի մեջ լինեն Հայտը բացելուց հետո 90 օրվա ընթացքում և ուղեկցվեն **Հայտի ապահովման հայտարարագրով:**
5. Գնումները կիրականացվեն դրամաշնորհային պայմանագրով ԿՀԵՀ-ի կողմից՝ համաձայն ֆինանսավորվող ծրագրերի գնումների քաղաքականությանը (փոփոխության է երթարկվել 2018թ. նոյեմբեր), և ԿՀԵՀ-ի կողմից ֆինանսավորվող գնումների ընթացակարգի (փոփոխության է երթարկվել 2018թ. նոյեմբեր 21), որը հրապարակվել է -ի կայքում՝ (https://efsd.eabr.org/about/documents/policies_and_procedures/):
6. Մրցույթը բաց է բոլոր հայտատուների համար իրավասու երկրներից, ինչպես սահմանված է Մրցութային փաստաթղթերում ԿՀԵՀ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերին և որոնք համապատասխանում են որակավորման պահանջներին:

Որակավորման չափանիշները ներառում են.

- Հաջողակ Հայտատուի կողմից վերջին երեք (3) տարիների ընթացքում կատարած շինարարական աշխատանքների միջին տարեկան ծավալը պետք է կազմի՝ **79,500,000 ՀՀԴ:**

- Գլխավոր կապալառուի փորձը. վերջին 5 տարիների ընթացքում նմանատիպ ծավալի, բնույթի և բարդության աշխատանքների նվազագույնը երկու պայմանագիր (ջեռուցում, օդափոխություն, օդի լավորակում, ԷԽՄ, ՖՎ), /այս պահանջին համապատասխանելու համար աշխատանքները պետք է 70 տոկոսով ավարտված լինեն/. **18,550,000 ՀՀԴ յուրաքանչյուր պայմանագրի համար:**

- Շրջանառու ընթացիկ միջոցներ և/կամ վարկային գծերի հնարավորություններ, այլ պայմանագրային պարտավորություններով չծանրաբեռնված՝ **8,833,333 ՀՀԴ:**

7. Հայտերը պետք է ներկայացվեն Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ, մինչև **2023թ. մարտի 22-ը, ժամը 15:00:** Էլեկտրոնային եղանակով մրցութային հայտերի ներկայացում չի թույլատրվում:

8. Ուշացած հայտերը կմերժվեն և կվերադարձվեն փակ վիճակում հայտատուներին: Հայտերը կբացվեն մասնակցելու ցանկություն ունեցող հայտատուների ներկայությամբ:

Տեղեկություններ մրցութային փաստաթղթերի տպագիր պատճենը ստանալու համար.

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և
էներգախնայողության հիմնադրամ
ՀՎՀՀ 02580459
Հատուկ հաշիվ 2050422345051002
Ինեկոբանկ ՓԲԸ

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և
էներգախնայողության հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան 0019, Սայաթ-Նովա 29/1
Հեռ: + /374 10/ 545-121
Էլ. Փոստ: zaruhi.gharagyozyan@r2e2.am
Ինտերնետային հասցե: www.r2e2.am